ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

30. 08. 2024 *ք. Իջևան*

Մասնակցում էր ֆակուլտետի գիտական խորհրդի 23 անդամներից 13-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի՝ 2024-2025 ուստարվա նախապատրաստական աշխատանքների մասին (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տրվող «Մոնթե Մելքոնյան» և «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակների հավակնորդների առաջադրման մասին (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
3. Ֆակուլտետի կրթական ծրագրերի ղեկավարների հաստատման մասին (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը նշեց, որ կազմվել են ֆակուլտետում գործող 7 կրթական ծրագրերով 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասացուցակները, դրանք ուղարկվել ԵՊՀ ԻՄ պաշտոնական կայքում տեղադրման, իրազեկվել են դասախոսները և ուսանողները: Ամբիոններին հատկացվել և լրացվել են դասամատյանները: Ըստ համապատասխան կուրսերի և խմբերի՝ ստուգվել և բաշխվել է լսարանային ֆոնդը: Հստակեցվել են հրավիրված դասախոսների երթուղիների ժամանակացույցները: Ըստ այդմ՝ նշվեց, որ ֆակուլտետը պատրաստ է 2024 թ. սեպտեմբերի 3-ից սկսելու նոր՝ 2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնական գործընթացը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտներ Լ. Թումանյանը, Մ. Զուրաբյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի՝ 2024-2025 ուստարվա նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի մասին զեկուցող Կ. Պողոսյանը նշեց, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տրվող «Մոնթե Մելքոնյան» և «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակներին կարող են հավակնել 2 և ավել կիսամյակ անընդմեջ գերազանցություն, պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն ունեցող ուսանողները: Ըստ այդմ՝ «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակի համար նպատակահարմար է առաջադրել «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Հարությունի Դարբինյանի թեկնածությունը, ով ունեցել է վեց կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

«Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակի համար ներկայացվում է «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Ռիմա Մարտունի Եգանյանի թեկնածությունը, ով ունեցել է վեց կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, դասախոս Վ. Պողոսյանը, բ.գ.թ., դոցենտներ Լ. Թումանյանը, Մ. Զուրաբյանը, Կ. Պողոսյանը: Ֆակուլտետի գիտական խորհրդի անդամները հավանություն տվեցին առաջադրված թեկնածություններին:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Առաջադրված ուսանողների թեկնածությունները ներկայացնել ԵՊՀ ԻՄ տնօրենության հաստատմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցող Կ. Պողոսյանը, ներկայացնելով ֆակուլտետի կրթական ծրագրերի ղեկավարների անունները, նշեց, որ կատարվել է մեկ փոփոխություն. «Հոգեբանություն» կրթական ծրագրի ղեկավար Ռուբեն Աղուզումցյանի փոխարեն առաջադրվել է Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ, հ.գ.թ. Սոնա Պողոսյանի թեկնածությունը:

Հարցի կապակցությամբ ֆակուլտետի գիտական խորհրդի անդամների կողմից առարկություն չեղավ:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել ֆակուլտետի կրթական ծրագրերի ղեկավարներին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ	Կ. Պողոսյան
ՔԱՐՏՈՒՂԱՐ	Հ. Վանյան